

(Կ. Պոլսոյ) առաջնորդութիւնը: Մենք ևս կը խնդրենք որ զմեզ, Ս. Լուսաւորչի յետնեալ որդիներս, ասոր միջոցաւ բարձրացնես՝ քու փառքիդ ու ասոր նախնիքներուն պատուոյն համար, նաեւ կատարած ըլլալու համար քու սրբազան հաւէդ (եղիազարէն) տրուած խոստումը: Եւ դուն որ Մովսէսի յաջորդին՝ Յեսուի նման գէմքիդ վրայ կը ճառագայթես սուրբ հօրդ երեսին լոյսը՝ նոյն լոյսէն ճրագ մը վառես, որպէսզի մենք ևս ալստեղ փոքր մի ցնծանք այդ լոյսով:

Քիչ մը երկար ծանրացանք Երեմիայի այս նամակին վրայ՝ նկատելով զայն արժէքաւոր վաւերագիր մը Գրիգորիս վարդապետի կենսագրութեան համար: Այդ նամակէն կ'իմանանք թէ արդարեւ Գրիգորիս վարդապետ Ս. Էջմիածինի մէջ ինը տարի ապրելով ձեռք բերած էր «զկատարելութիւն ուսման», օժտուած էր փայլուն ձիրքերով ու ապագային կարեւոր դեր մը կատարել կը խոստանար եկեղեցական ասպարէզի մէջ⁽¹⁾:

Երեմիա քանի մը եօթնեակ թէքիրտաղ մնալէ ետք՝ հոն կը թողու Գրիգորիս վարդապետը ու ինք կը դառնայ Կ. Պոլիս, ու այնտեղէն կը զրկէ իր երկրորդ ու երրորդ Ուղերձները:

Երկրորդ Ուղերձը (Յաւել. էջ 540-543) ձօնուած է թէքիրտաղի իր հին ու նոր աշխարհական բարեկամներուն, զորս կը յիշէ իրենց անուններով ու կ'ըսէ. «Վարդապետին իմ պատճառաւ՝ ընդ ձեզ նստիլ զըսմէթ եղաւ» (տող 157 և 158): Ատոնցմէ, ի միջի այլոց կը մատնանշէ Գրիգորիս վարդապետի յատկապէս

(1) Զէլէպի ինք եղած է իր օրգոյն՝ Գրիգորիս վարդապետի առաջին ուսուցիչն ու դաստիարակը, ինչպէս կը գրէ անոր ուղղած նամակին մէջ. «Որքան քո (զիս) ոչ միայն ծընօղութեան սակի՝ այլ և դաստիարակութեան» (Յաւ. էջ 456): Դարձեալ՝ «Պարտիս սիրել զիս իբրեւ զվեհագոյն վարժապետ» (անդ, 457):